



Երևան, 29 հունվարի, 2018 թ.

Հարգելի տնօրեն,

«Այբ» կրթական հիմնադրամն ուրախ է հայտարարելու, որ «Կենգուրու 2018» միջազգային մաթեմատիկական մրցույթին մասնակցել ցանկացող դպրոցների գրանցումը սկսված է:

**Այս տարի լրանում է «Կենգուրու» մրցույթի և դրա շնորհիվ
Հայաստանում և Արցախում ձևավորված յուրօրինակ ու հզոր մանկական շարժման
10 տարին:**

Այս հորեյանական տարում սիրով հրավիրում ենք Ձեր դպրոցին՝ մասնակցելու մրցույթին, միասին մուտք գործելու նոր մաթեմատիկական տասնամյակ և կերտելու մրցույթի հաջորդ տասնամյակի պատմությունը:

Այս տարի «Կենգուրու» մրցույթը կանցկացվի **մարտի 15**-ին:

Մրցույթին մասնակցելու համար երեխաների վճարման, անդորրագիրը դպրոց ներկայացնելու և դպրոցի ցուցակներում գրանցվելու վերջնաժամկետն է **փետրվարի 16**-ը, իսկ դպրոցի հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ **փետրվարի 21**-ը:


ԱՆԱԿՆԿԱԿ !

Այս տարին «Կենգուրու» մրցույթի համար հորեյանական է, և «Այբ» հիմնադրամն անակնկալ է պատրաստել այն բոլոր մասնակից դպրոցների համար, որոնցում չի արձանագրվի որևէ տեսակի խախտում կամ արտագրություն:

«Կենգուրու 2018»-ի անցկացման մանրամասն կարգը, ինչպես նաև մրցույթին մասնակցելու վերաբերյալ բոլոր նյութերը հասանելի են www.kangaroo.am կայքում: Բոլոր հարցերով կարող եք դիմել ձեր մարզային համակարգողներին, որոնց հեռախոսահամարները գրված են նամակի դարձերեսին և մրցույթի կայքում:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: «Մեղու 2017» և «Ռուսական արջուկ 2017» մրցույթների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները կուղարկվեն մասնակից դպրոցի Էլփոստին մինչև հունվարի վերջ:

Հարգանքով՝



Սոնա Կոչեցյան
Գործադիր տնօրեն

Ինչ է ներառում «Կենզուրուի» փաթեթը

1. «Կենզուրու 2017»-ի հակիրճ նկարագրող ամփոփում
Այստեղ ամփոփված են մրցույթի անցյալ տարվա հիմնական արդյունքներն ու ձեռքբերումները:
2. Ուղեցույց դպրոցների համար
Այստեղ, հեշտության համար, քայլ առ քայլ ներկայացված են դպրոցի պատասխանատուի անելիքները՝ ըստ ժամանակացույցի:
3. Դպրոցի հայտի ձև
Խնդրում ենք լրացնել մասնակցության հայտը և մինչև փետրվարի 21-ը ներկայացնել «Այբ» հիմնադրամի գրասենյակ կամ ուղարկել փոստով՝ ձեր դպրոցի մասնակից աշակերտների ցուցակի և վճարման անդորրագրերի հետ միասին: *Մրցույթին կմասնակցեն միայն նշված ժամկետում հայտ ներկայացրած դպրոցները:*
4. A3 չափի պաստառ
Խնդրում ենք պաստառը փակցնել դպրոցում որպես «Կենզուրու 2018»-ի հայտարարություն և մրցույթին գրանցվելու ուղեցույց:
5. Մասնակցության վճարը կատարելու համար անհրաժեշտ բանկային վավերապայմաններ
Այս թերթիկներում բերված է մասնակցության վճարը կատարելու կարգը՝ Հայաստանում «ԿՏԲ-Հայաստան» բանկում, Արցախում «Արցախբանկ» ՓԲԸ-ում, կամ «ԹԵԼ-ՍԵԼ» տերմինալների միջոցով:
6. Օրացույց
2018 թվականի համար նախատեսված օրացույց:

Ինչ է «Կենզուրուն»

«Կենզուրուն» մեծ ժողովրդականություն վայելող մաթեմատիկական մրցույթ է և ներկայացնում է տրամաբանական ու հետաքրքրաշարժ խնդիրներ: Ամեն տարի մրցույթին մասնակցում են միլիոնավոր երեխաներ աշխարհի մոտ 80 երկրից: Մրցույթն անցկացվում է անմիջականորեն դպրոցներում՝ ներգրավելով 3-12-րդ դասարանցի բոլոր ցանկացող երեխաներին: Բոլոր մասնակից դպրոցներին և աշակերտներին տրվում են մասնակցության հավաստագրեր, բոլոր երեխաները ստանում են նաև հուշանվերներ, մրցանակակիրները՝ խրախուսական մրցանակներ, իսկ լավագույնները՝ նաև պատվոգրեր: Հաղթողներին սպասում են արժեքավոր նվերներ, ընդհուպ մինչև տարբեր երկրներում կազմակերպվող միջազգային ամառային ճամբարի ուղեգիր:

«Կենզուրու» մրցույթը չի անցկացվում դպրոցների միջև, այլ նպատակ ունի համընդհանուր հետաքրքրություն առաջացնելու մաթեմատիկայի հանդեպ՝ այն առավել գրավիչ ու սիրելի դարձնելով երեխաների համար: Մրցույթի ավարտից հետո յուրաքանչյուր դպրոց կստանա իր աշակերտների արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն:

«Կենզուրու» մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության և Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունների հովանու ներքո:

Հայաստանում և Արցախում մրցույթի բացառիկ կազմակերպիչն է «Այբ» կրթական հիմնադրամը:

Մարզային համակարգողներ

1. Արագածոտն
098 38-08-63, Շուշաննա Ավայան
2. Արարատ
093 38-08-64, Վարդուհի Մելքոնյան
3. Արմավիր
093 38-08-63, Անահիտ Ավայան
4. Գեղարքունիք
093 38-08-64, Վարդուհի Մելքոնյան
5. Երևան
098 38-08-63, Շուշաննա Ավայան
6. Լոռի
093 38-08-63, Անահիտ Ավայան
7. Կոտայք
093 38-08-64, Վարդուհի Մելքոնյան
8. Շիրակ
093 38-08-63, Անահիտ Ավայան
9. Սյունիք
093 01-08-61, Մարինե Սարյան
10. Վայոց ձոր
093 01-08-61, Մարինե Սարյան
11. Տավուշ
098 38-08-63, Շուշաննա Ավայան
12. Արցախ
097 33-79-55, Միքայել Համբարձումյան